

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻԻ ԽԱՄԱՐ	
Վառնա	Քր. 1,50
Վառնայէն գուրս	2
Արտասահման	2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք ետ չեն զրկուիր :
Նամակ գրամ և այլն զրկել հե-
տելեալ հասցէին ,
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ « ԿԱՏԱԿ » Ի
Վառնա (Պուլկարիա) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԴՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието

„ГАДАГ“

ВАРНА (България).

Administration du journal

« GADAG »

VARNA, (Bulgarie).

Հաար 7 1/2 Սանթիմ

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Սխալ չը հասկնանք :

Իրենց աւերակներովը պարծենցող ՏՕՆԻՅՈՒՆՆԵՐՆ ևն որ կը մեղադրուին , որոնք յեղափոխութեան անունը աղտոտեցին ԱՆԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ՝ յեղափոխութեան և ՅՈՅՅԻՆ ալ՝ ապստամբութեան անունը տարվ . պատերազմի դաշտին վրայ հերոսաբար մեռնող մարտիրոսներու յիշատակը պաշտելի և անմիտանալի է ամեն ուրեք , ամենուն համար :

Ստպեալական Զէյթունի յեղափոխութիւններն և անոր գիւցազնային քաջագործութիւններուն համար ոչ միայն մենք Հայերս , այլ ամբողջ աշխարհ կը հիանայ , նոյն իսկ թշնամին՝ իւր էթէմով ու չէթէմով . պատերազմի իսկական նահատակութեան պատուանիշը Զէյթունցի քաջ պատանւոյն նուիրած է բաւառաւոր Պէշիկթաշեան :

Աղաւթ ու անկախ ըլլալու փոփաքը նոր բան մը չէ , ամեն ինկած ազգեր կը փափաքին վերականգնել , իրենց անցած գնացած փառքին ու բազդին հասնել , իրենց ազգային ու հայրենական իրաւանց տէրը դառնալ :

Հարստահարութեանց տալ ճնշուող ու ճզմուող , զրկանքի ու նախատանքի մատնուած ժողովուրդներ՝ ինչ ազգութեան կամ կրօնքի ալ պատկանին , վերջապէս կուզեն խաղաղ ու երջանիկ օրեր ունենալ . ափիկա ընդհանուր մարդկութեան պահանջն է :

Նորածին մանկիկն իսկ չուզեր կապուցի կամ կաշկանդի տալ մեալ , և տալ իւր լաց ու դռներով աղաղակ ու գանգատ կը բռնայ նոյն իսկ իրեն կաթ ու անունդ տուող մայրիկին դէմն ալ . կուզէ արձակ լինիլ , կ'ուզէ ազատ ըլլալ :

Մեր ազգն ալ այս ընդհանուրի կարգովն իր ազատութիւնը փնտռելուն , իր սեփական ու սիրտական հայրենիքին և հարստութեան տէրը դառնալու փափաք ու ձգտումներուն համար ոչ մի ժամանակ մեղադրելի է , նամանաւանդ թուրքի նման վայրենի ու բարբարոս կառավարութեան ճիւղալային ճնշումներուն և դադանալին արարքներուն առջեւ :

Թուրքին դադանութիւններն համբել աւերող աշխատութիւն մ'է : Մահմատական կրօնքը կը պատուիրէ իսլամութենէ դուրս եղած բոլոր մարդկութիւնը ջնջել և անոնց ինչքն ու գոյքերը սաւառել , կ'ինքնն ու տղջիկները գերել :

Թուրքին կրօնքովը այդ ամեն նախնիքներ՝ ոչ թէ մեղք այլ բացարձակապէս առաքինութիւններ են. ուր շատ կը գործէ այդ գաղանութիւններէն նոյնքան բաժին ունի Մէհմէտի ԱՂԱՅի Ճէննէթին մէջ :

Թուրք ազգին չարազանդ բարբարոսութիւններն մարտիկ և անոր անդրմարդկային եղբունագործութեանց տակ հանդուրժել և լուռ նստելն աւանակութիւն է, էջութիւն է. բոլոր աշխարհի ժանտախտը եղող նոյնալիսի դժոխային մի կառավարութեան ոչ թէ ամբողջութիւնը պահպանել, այլ անոր կտորն ու բրթունքին անգամ գոյութիւնը ամօթ ու նախատինք է ընդհանուր մարդկութեան :

Ըսինք թէ՛ ընդհանուրի կարգովն մեր Հայ ազգին ալ ազատութեան ձկառումներն մեղադրելի չեն, սակայն ի՞նչ ըրինք մենք, մեզմէ հաղարաւոր անգամ աւելի զարաւոր բիրտ ուժին դէմ ի՞նչ պատրաստութիւն ունեցանք, ի՞նչ քաղաքական յարաբերութիւն մշակեցինք. մեր ազգային շահուն համար ի՞նչ որոշ ուղղութեան հետեւեցանք, աչքի առջեւ ունենալով այսչափ մեղ բազմակից ազգերու փրկութիւնն մեր դրացի հզօր պետութեան — հանդէպ մեծն Ռուսիոյ — բարեկամական ի՞նչ նշան ցոյց տուինք և որուն դէմ անխնայական վայրահաչանքներէ զատ ի՞նչ ունեցանք. դեռ այսօր անթափած ու զգաստացած ենք արդեօք և հասկցած ենք թէ՛ Երթ և Ո՞րք է մեր յեղափոխութիւն կրնալ ընելիք տեղը ու որո՞ւ պաշտպանութեանը պէտք ունինք :

Մեր մէջ երեւցածը՝ մանաւանդ վերջին մի քանի տարուան մէջ, տեսականը գործնականի և երեւակայականն իրականութեան վերածուելու փորձերուն մէջ անարդարանալի ոճիրներ գործեցինք,

դիմակաւոր լարախաղներ, ինքնակոչ պետեր, կեդրոնական ու անկեդրոնական դործիչներ բռնապետներ(“”), անանուն ու անապացոյց ներկայացուցիչներ, փոխանակ ազգին միջուկն սերտելու, սորվելու, ինչպէս Ազգին ու Հայրենիքին բարութեան անկեղծ աշխատաւորներ փոխանակ անոր վիճակը լաւ իմաստասիրելու և ներքին փորձառու գործիչներու խորհուրդներէն օգտուելու և դիտակցութիւն կազմելու, ծագէ ծագ, եղբւրքէ եղբրք, պատգամներ տեղալով, կատարեալ *solidaritet* ազգին տունը քանդեցինք, և առանց հանդամանքներն ու պարագաները հաշուելու անփոխարինելի կորուստներու պատճառ դարձանք. կորուստներ՝ որոնց յիշատակն անգամ զայրոյթ կ'ազգեն մարդուս և արիւնով կը լնուն հշմարիտ հայրենասիրին սիրտն ու հոգին :

Յ. ՉԱՐԸՐԵԱՆ

ՄԵՐ ՇՈՒՐՋԸ

— 0 —

Այս օրեր ձեռքերնիս անցաւ յայտարարութիւն մը Վառնայի Հնչակեան մասնաճիւղի Վարչութեան կնքով :

Մտիկ ընենք դիմք .

« Երբ Հայութիւնը կողոպտուած, արտորուած, բանտարկուած, ջախջախուած և վիրաւորուած կուսակցութեան ամեն հարուածներէն, այսօր հոգեվարքի մէջ հեծելով, անէծք կը կարդայ բոլոր իր հորազատ զաւկներուն, որոնք այսպէս անհատական հաշիւներով զինք թողուցին կիսամեռ : Պատասխանատուն միայն եւ միայն կուսակցութիւններն են » :

Կան մեղքեր, որոց թողութիւն կը շնորհուի սլարդ խոտտովանութեամբ մը. իսկ անոնք՝ որ եղեռնի հանգամանքն ունին եւ ամբողջ ժողովուրդի մը ձակառաղքին հետ խաղցած են, ըսե՛նք ոճիրներ՝ որ մայրեր լացուցած, հարսեր այրիացուցած, զաւակներ որ-

բացուցած եւ ամբողջ Հայաստանը վերէն ի վար արեան միապաղաղ ուղիէն մը դարձնելու պատճառ եղած են, իրենց հեղինակներու արեամբ խիստ չին սրբութիւն, եթէ Հայն ունենար ղինուորական ասեան մը եւ գրնտակներով ծակիկ ծակիկ ընէր անոնց դարչելի մարմինները:

Մենք չենք գիտեր ակնարկուած անհատական հաշիւները, բայց երբ իրենք կը խօսին, բնական է որ մեզ պէս մահկանացուներ ալ ստակումով հաւատան եւ մտածեն թէ՛ երէկուան Հնչակեանն՝ այսօրուան Մարտեանը, երէկուան Սօցիալիսթն՝ այսօրուան պարզ Յեղափոխականը, արդեօք նոյն չե՞ն ըստ զերն ու գերակատարներ. եւ կամ թէ մորթ ու դիմակներ փոխած, ժողովուրդին մերձեցալու համար այս անգամ ալ իրենց յանդերձը ըրած չե՞ն Միութիւնը, բառերու ամենէն պաշտելին եւ ամենէն աւելի փընտուռածը հրապարակի վրայ:

Այսպէս թէ այնպէս մենք կը մաղթենք եւ խորտէկը մաղթենք որ հրաբխային սլոթկումով մը ցցուէր ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ եւ իր տաք լաւաներուն տակ յաւատենապէս ծածկէր, ինչ որ աղտոտ է՝ իրենց խոստովանութենէն դատելով եւ ինչ որ աղտոտագոյն է թերեւս իրենց ասպագայ խոստովանութեանցը համեմատ:

Արդարութեան պարտք մ'է սակայն յիշել թէ յայտարարութեան լեզուն իր տեսակին մէջ միակ եւ ատաղձնն է, ըլլալով պարկեշտ եւ աղատ այն հայնոյանքներէ, որոնք Կուրի ասիուներէն տրձակ տրձակ քաղուած, եւ կած են կարծիս զարդ ու զարդարանքն ըլլալու այդ կարգի գրուածներու ամենամեծ մասին:

Տեւե՛:

ԼՈՒՍՈՒՄԻ ՔԻՒ 2 ՀԱՆՆԼՈՒԿԻ

Քառեալ եւ գալուստ, նորիւրկ «Կասակ»
Որ չը խնայես եւ քերքե քառնեակ
Սու առաջօրէն կասակ շուայիս
Քա «Կասակ» ներս լուծում պահանջես:
Սքի այս անգամ դարձեալ յայտնակ
Անգուստ վայելեմ, կրկնակի քառնեակ:

Երբ դրասնեկիս մէջ բառգիրքը
ձեռքս կը թղթատէի, տեսայ որ սոյն
գրքին մէջէն քաղաւ, մում, պարապ,
կասակ բառերը դուրս ելեր էին, կերեւ
ւի թէ մօտ սեղ մը օգտփոխութեան
դաշեր էին որ շատ չանցաւ վերադարձան,
երբ տեսայ նոցա վերադարձը, իրենց ան
ծանօթ կեղծելով անունին հարցուցի. ահա
թէ ինչ պատասխանեցին, մենք երկու բե
րան ունինք որ կողմէ սրկարդացուինք նոյն
ձայնը անփոփոխ կը պահենք եւ առանց
փոփոխման կը մնանք նոյնը, այսինքն,
քաղաւ, մում, պարապ, կասակ: Այժմ
նկատելով որ այս հանելուկը կատակ մ'է
ուստի զայն լուծելով առ Ձեզ կուղար
կեմ, սպասելով 'ի Ձէնը, փոխան Ձեր
մէկ կատակի քսան թիւ «Նյատակ»:

Թափառիկ

ՀԱՐՈՒՄՏՆ ՈՒ ՊԱՏՈՒԵԼԷՆ

— 0 —

— Վայրկեան մը զիս մտիկ ըրէ պատուելի:

— Ականջս քեզ է:

— Գիտնալու ես որ հարուստ եմ:

— Շատ լաւ:

— Գիտնալու ես որ բարեգործութիւն ընեն իմ սկզբունքիս հակառակ է:

— Քու գիտնալու բանդ է:

— Գիտնալու ես սակայն որ ոյս սկզբունքս փոխած եմ հիմայ:

— Այդ չեմ գիտեր:

— Լաւ ուրեմն, տեսնելով որ Գերման բարերարներ մեր որբերը ու աղքատ տղաքը ամեն կերպով խնամելու հոգը յանձն կ'առնուն, ես ել նախանձելով այդ բարեգործութեան ի փոխարէն կ'ուզեմ Գերման աղքատ տղաքներ ձրիապէս խնամել, հագուեցնել եւ դաստիարակել տալ քու ձեռամբդ եւ գրեզ լիովի վար:

ձառորել, ի՞նչպէս, այս ընելիքս բարե-
գործութիւն մը չէ՞:

— Արդարեւ մեծագործութիւն ալ է:

— Սակայն և այնպէս, ճիշդ Գերման
բարերարաց նման, ես ալ ընելիք բարե-
գործութեանս փոխարինութիւն մը պա-
հանջելու քմահաճոյքը ունիմ:

— Անշուշտ երկինքէն . . .:

— Ոչ թէ երկինքէն, այլ նոյն իսկ քեզմէ:

— Ինձմէ՞ . . . և ինչ բան կը պահան-
ջես:

— Կը պահանջեմ որ այդ տղայոց խա-
չակներէ ստղծեցնես, Հայ եկեղեցւոյ դա-
ւանանքը ընդունիլ տաս, և տակաւ առ-
տակաւ զիրենք կատարեալ հայեր շինես:
Գործիդ կուղայի՞:


— Օ հօ՞ . . . ինչ ամբարտաւան պա-
հանջում: Հայը գերմանացիներէ զոյս կ'ըմ-
բռնեմ. բայց Գերմանը Հայացնել լսուած
բան է. անոնք ահագին դժամ և հզօր
կայսրութիւն ունին, Հայն ի՞նչ ունի.
(ճանճերը շագար եղած տեղը կը ժող-
ուուին, և ագռաւներն ալ դիակի վրայ):

Չէ մի որ Հայն ալ երկնային անսպառ
դանձ, և Քրիստոսի ամենահզօր թագա-
ւորութիւնն ունի, որոյ զինուորն ես դուն:

— Երթ յետս իմ սատանայ:
Գ.

ՀԱՆԵԼ ՈՒԿ. ԹԻԻ 3

Ջուրը կղպանք խոշորկեկ
փայտը բանիք փորրկեկ
Որսը փախաւ համարձակ
Որսորդն ինկաւ ի ծուղակ



Ի Խ Թ Ա Ր

Կատակ մուհարրիբի Ս. Ֆէլէկեան է-
ֆէնտի պուրատա պուլընմատրղընտան
պուռ տէֆա «Թօփալ Շէյթանըն Հաքի-
միյէթինին» միւթէպաղըսը սիլ մէճպու-
րիյէ կէլէճէք նիւսիէյէ դաբըշ տըր:

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

— 0 —

Ելաւ հովիկը առաւօտին,
Ողջոյն առաւ լերան հովտին,
Էւաներ՝ ձորեր ողջոյն չառին,
Թէ սիրուհիս իմ ննջէ:

Ծագեց արեւ ծաղկանց վրան,
Ծաղկանց թերթերը դոցուեցան,
Զի չարթնցաւ դեռ սիրական,
Սիրոյս հրեշտակ իմ ննջէ:

Սարերն ի վար սոխալին լջաւ,
Գնաց վարդին կոկոն դտաւ,
Բայց չհանեց ձայն, լուռ կեցաւ,
Թէ սրտիս վարդ իմ ննջէ:

Արեւն ի մութ երթայ ամառով,
Օրն երեկոյն ծածկի քողով,
Կը տաղնասլի հողիս սիրով,
Դեռ պաշտելիս իմ ննջէ:

Գան աւետիս տան թէ — յարե՞աւ,
Եւ թէ վարդիդ թերթեր բացա՞ւ,
Զի՞ փոյթ, կենացս դարունն անցաւ,
Ալ սիրուհիս թող ննջէ:

Ա. Զ. Դ.

Ինչպէս յայտնի է Պատ. Բաժանորդայ-
մեր թերթը կանխիկ է: Անոնք, որ ընդու-
նած են բաժանորդագրութիւնը, կը խնդ-
րենք, որ զրկին մեզ բաժնեգիրն. իսկ ա-
նոնք, որ չեն ընդունիր, թերթը եւս դար-
ձունեն շուտով:

Կատակ կը ծախուի նաեւ հետեւեալ տե-
ղերն:

Սասունի սրճարանին ծխալաճառը Պ.
Թէրզեանի մօտ, Մուսալլա, Ապուրրահման
մղկիթին դիմացը Պր. Ա. Զարպհանէլեանի
եւ Մուսալլա, Վասպուրական սրճարան Պ.
Գեղամ Տ. Յարութիւնեանի մօտ:

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.